

Ե.

# ԵՐԳԵՐ.

ԳՈՒԹԱՆԻ, ՀՈՒՆՁՔԻ և ՍԱՅԼԻ ԵՐԳԵՐ.

Ի.

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԵՐ \*)

Ալաօկերտի բարբառով 1)

Մեր գութան էկաւ բարով.  
Զեր գութան էկաւ բարով.  
Դուօմնի գութան կոտրի,  
Զսաղի հազար տարով:  
Գործ առաւ ել:  
Մեր գութնի սազն ա շատ.

Զեր գութնի սազն ա շատ.  
Մեր յարտ կեղնի շատ բարդ,  
Կեղնի ձզի կըոլ ու դարտ:  
Գործ առաւ ել:  
Մեր գութան հասաւ յառուն,  
Զեր գութան հասաւ առուն.

\*) Գութանի երգերու մէջ, բացի բուն գութանի երգերէն, կը խառնուին կրօնական, սիրահարական, պարի, զաւեշտական եւլն. երգեր, զորս փոքր թուռվ գրի առած եմ:

Գութանի երգերը ընդհանրապէս Բուլանիս, Արճէշ, Արծկէ, Խնուս. եւլն. վայրեր կերգեն.

1) Գրի առնուած է 1888 թուին յԱլաշկերտ.

Մենք յէլինք չուր ի գարուն,  
Զեր բերնէն դայ լիրդ արուն:  
Գործ առաւ ել:

Մեր յարտն ա փխրիկ,

Զեր յարտն ա փ՛րիկ,

Դու պաի ցանիք

Մենք պաի քաղինք:

Գործ առաւ ել:

Մեր գութան գէլնի, գառնայ.

Զեր գութան գէլնի, գառնայ.

Ախր սաղ մեր մաճկալ,

Պաի բառնայ ձեր մաճկալ

Գործ առաւ ել:

Հալալ կէնիմ մեր գութնին,

Չհալալ կէնիմ ձեր գութնին,

Վըր արտանին, վըր կռանին,

Եէնա կոտրէ ներսի սամին,

Չուապ տարէք խազնատարին,

Ճիժ չվաստիկ կիրակմտին,

Կնունք չէնայ ուրբթմտին,

Գործ առաւ ել:

Մաճկալ կայնաւ վըր մաճին,

Օսկի բոչամ վըր ակնջին,

Զէն տուեց յամըլուորին,

Յամլուոր ըսեց ուժանուորին.

Զէն հասաւ հորիքորին,

Զէն տուէք հորիկորին,

Օր դոււմնի արևն հորին.

Գործ առաւ ել:

Գործ, գործ, դուրպան գործ.

Գործ առաւ ել:

Զան, զան, զան.

Զան, զան, զան:

Գութան գիլեր, ուր գին կուզէր,  
Գութնի բուղէն կոիւ գուզէր,  
Եէկիկ կռտան կնճակ գուզէր,  
Վըր արտանին, վըր կռանին,  
Չուապ տարէք խազնատարին,

Տնդին պարկող կիրակմտին,  
Ճիժ վաստկող ուրբթմտին,

Գիրկ դրեց հորեսորին:

Հորեսորին—կարմիր գլուխ,

Մինտան—մուկն ի բերան,

Փոշետուն—փոշին ի յաշը,

Խարզնտան—խարզան ի ձեռ,

Խնձօրտան—խնձար գոտին:

Աղաւ աղջիկ ուժանուորին:

Մուըլ տան—մուըլ բերան.

Հայն ու պանիր յամլուորին,

Խերն ու բարին մեր մաճկալին,

Գործ առաւ ել:

Յամլուոր կերգէ.

Գութան գիգայ մոլուկ,

Դուսման մէջ օլովուկ.

(Դոր էկաւ ուժանուորին)

Առաւ զիսունկն ու ապրում,

Խունկ տուեց պատօւըներում.

Ապրում տուեց աղջիներուն:

Աղջի, աղջի, շան աղջի,

Բեր, ապրում տուր ընծի, թէ եար չեմ էղնի քի:

Մինեան հոտաղ կերգէ

Եշ մի էկաւ խաթաթայ.

Բոկու ոռէն կը կաթայ

Ո'ըն օր չբոռայ, չքշայ,

Ենինք էնդոր հալվա, գաթայ,

Քառսուն տարով ախ քաշայ:

Փուեան հոտաղ կերգէ.

Հիվա, հիվա, հիվական

Բբուէն զլօխ դիւական,

Դեն յէլաւ սար ու սկերան,

Զգեր յէտն էրան, էրան,

Ոըն օր չբոռայ, չքշայ,

Էրթայ լցուի ընտոր բերան:

Գործ առաւ ել:

Գութան գիգայ ճռուըռալէն.  
Կռուան գիգայ մռմռալէն,

Յաշեր լցէ կուց կուց արուն,  
Կռիւ կուղայ հըտ պոլ Սարուն.

Գործ առաւել ել:

Արև առէ սարի դօսին,

Շիրին, դուրպան քու նմուշին.

Գլօխ կապէ ինչ օր փուշին,  
Մարալ, մեռնիմ քու բուրուշին,

Գործ առաւ ել:

Էկաւ հասաւ ամրան ամիս.

Կռուան կոտրէր ջուխտակ սամիս.

Գործ առաւ ել:

Արև առաւ վեր խաչերաց,

Թառն, դուրպան քու աչերաց.

Գործ առաւ ել:

Յարտեր յափան,

Զարոց խափան,

Տէր պահապան,

Ու օգնական,

Գործ առաւել ել:

Քամին էկաւ հուսիսու,

Դուման բռնէ հարաւու,

Հացուոր յնկերա նամրախ.

Եզն այսէջ, գլոխ կախ:

Գործ առաւ ել:

Պառաւ էկաւ կուզ է գուզ,

Շալակ դրուկ չափուկ մի գուզ.

Յմուն տուեց մէկ ու էրկուս:

Յամուորին տասուերկուս:

Գործ տռաւ ել:

Վըր հնգին ա, վըր մնկին,

Վայ լընցնողի հօր գանկին,

Շներ վրէն տուճկին,

Որ չբարենի մանճլիին:

Գործ առաւ ել:

Դաշտ ու դուրան քար ու քըռա

Գութան միջուն կը ֆռփռայ.

Ո՞ր չքշայ, ո՞ր չբոռա,

Ուր մամ էնի քըդու դռայ (կին):

Գործ առաւ ել:

Գութան յէլեր ա սազին,

Պառաւ պարկէ վըր գաղին.

Փուշ չըռւեր ա վըր վզին:

Թազիք յէրես կը լիզին:

Գործ առաւ ել:

Մեր գութան յէլաւ դարձաւ,

Զեր գութան յէլաւ դարձաւ.

Ուժիկ, Լուսիկ եզ ու գմին:

Խեր բարախեար ափոյի մալին.

Գործ առաւ ել:

Հարս ա, ու հարս ա.

Սարէն գիգա, հարս ա.

Բեռ մի ծաղիկ վըր փիճին,

Օսկի օղեր ակնճին:

Գործ առաւ ել:

Գործ բալրաւ,

Դուօման մէջ մոլլաւ:

Գործ առաւ ել:

Գութան գիգէր ճռուըռալէն,

Շիրին գիգէր կըռկըռալէն,

Կոսոս թալէր յարտի յափներ,

Համ կը շնէր, համ կը քանդէր:

Գործ առաւ ել:

Շաղն ա տռւե վըր յարտերաւն,

Սարտար դուրպան քու յաշերուն.

Ցնչի ա լցուե կուց կուց արուն,

Զէ էվ գիգայ բարի գարուն:

Գործ առաւ ել:

Էնդին լուծ, էնդին լուծ.

Որ չբոռայ մտնի ... :

Գործ առաւ ել:

Խերն ու բարին վըր մաճլիին,

Զուն ու գաթան յամլուկրին,

Հացն ու տուն ուժանուռին.

Ցաւն ու չոռ հարիքուորին:

Գործ առաւ ել:

Օծին էկաւ կուզ է կուզ,

Դեկին էկաւ կուզ է կուզ.

Պառաւ մլին ջաղջից դուս.  
Էփին պուտուկ մի ջրխուս.  
Տուին, ճամբին դէմ Փրխուս:  
Գործ առաւ ել:

Արև գնաց, ցածրցաւ,  
Կարեկահաց բանձրցաւ.  
Մաճկալի սիրտ քաղցրցաւ.  
Թողեց, գութան յարձկուաւ.  
Ցղէկներ, դիտա իշկէր.  
Ճաշ իմ էփէ, արէք, կէրէք.  
Աւտալ աղէն հետ ձի բերէք.  
Գդալ չկայ, մատով կէրէք.  
Կէրէք, կէրէք փորմի պնախնք,  
Յուշիկ, յուշիկ յէլնինք վարինք:

Գործ առաւ ել:  
Գութան, գութան.  
Հետ վըր ափան.  
Զարկեց հորուն,  
Հանեց տորուն:  
Գործ առաւ ել  
Որն օր չի քայ հորէք տուն.  
Ըսկի չեղնի քուն ու դատրում.  
Գործ առաւ ել:

Մաղկաւ արև վըր մեր դաշտին.  
Փիլաց ճակատ Քօսա—դաղին.  
Հաւ ու հաւքեր կը ճըլվըլան.  
Ճժեր ցրտու կը լըկըրկան:  
Գութան գութան, ջան գութան,  
Առանց քղի մենք փարիօան.  
Հորունդ բանի, կոշտեր հան,  
Ղուրպան էղնինք քու խոփտան:  
Առործ առաւ ել:

Շիլէն ծալ, շիլէն ծալ \*),  
Շիլէն ծալ ու մալ էրինք,

Շիլէն ծալ ու մալ էրինք,  
Պագ մ' ընծի հալալ էրինք.  
Զաւ պարե պզտի եարէն:  
Աղջի, աղջի, ջան աղջի,  
Սանամ արջկան \*\*) կը մանի,  
Մարդ չկայ իմ բարածէն,  
Խազար մի ընտոր տանի:  
Շիլէն ծալ, շիլէն,  
Շիլէն ծալ ու մալ էրէք,  
Շիլէն ծալ ու մալ էրէք,  
Պագ մ' ընծի հալալ էրէք: Ան.

Խաման սարեր, հով էրէք,  
Իմ դարտին դարման էրէք,  
Հաւար սարեր, հով էրէք,  
Մալուլ իմ, չարա էրէք:  
Գիշերսի ես գուրս յէլայ.  
Թուլս ամպն անուշ կը ցոլէք.  
Դէ ցոլա, ցոլա, ցոլա,  
Դէ ցոլա, հալուայ հարին:  
Ցոլա, ցոլալուդ դուրպան,  
Փիլա, փիլալուդ հայրան:  
Հաւար սարեր, հով էրէք,  
Դարդի իմ. չարա էրէք:  
Լուսնակ գիշերն հովն անուշ,  
Սրտի սիրածն էր անուշ,  
Սէր ու սաւտից մալուայ.  
Նիկեար տեսայ, շիւարայ:  
Ես գիշերսի դուս յէլա,  
Թաթախ ճնիկ թալեր էր,  
Բորիկ հետիկ դացեր էր,  
Բոնի հետիկն ու դացի,  
Իմ եար մէջն էրի չտեսի:  
Դացի—դացի դոնիկ բաց,

\* ) Այս տեղից սկսած պարի եւլն. երգեր. որ գութան վարելու մի-  
ջոցին եւս կերպեն.

\*\*) Իլիկ. բուրդ մանելու գործիք.

Մատայ, առնէնք թաժայ հաց.

Անարի բուլէն զիս ի խած:  
Հա հանտ իմ, ձանտ իմ, հանտ իմ,  
Քոփակ! մակ հիւտանդ իմ,  
Բռնիմ, մուրուստի կնտիմ:

Տղէն կանէ կարմնեին,  
Դոլապ գնտեր յակնճին.  
Խապար տարէք զոնքճին,  
Աղջիկ տայ էտ կարճին:  
Խարսա բերդը բլեր էր,  
Խարս տակը քներ էր.

Քներ էր քրտներ էր,

Վարդը յէրսին թփուեր էր:

Կաղզուանու ձորէն եմ,

Մեծ բաղի խնձորէն եմ.

Խնձոր թալեմ, արի տար:

Խնձորի կէս խածուկ էր,

Չորս գուշն ալծթուկ էր.

Եարոջ գոտին դրուկ էր:

Կանանչ յարտի բնարին,

Շատ բարե հեռու եարին.

Դարման չէղաւ իմ դարտին,

Վարամ ուտայ հինդ տարին:

\* \*

### Մանազկերթի բարբառով

Հառաւել—հառաւել, յէշ 1).  
Հառաւել Մուսլո գոմէշ.  
Ձեռսի թալեմ Աստծու փեւ.  
Մզի ցորեն տայ փիօքիւ.  
Մասինք ատաք մեր ռէսի բէօ,  
Զեղնի ծախին բոզ գմէշ:  
Հելել, մելել Շէկ Կուտան,  
Հոտղներ, քշէք զէդ դութան.  
Օրթա հասնինք Բրէտ տան,  
Հա, մեռնիմ քզի Շէկօ, Կուտան:  
Տղա, Մանուկ քշա զէդ եղ,  
Գութան բանի քանդի սէզ.  
Ցորեն էղնի դէզ դէզ,  
Հա մեռնիմ Մանուկին ես:  
Փշա Լաւանդն ու Խնձորօն,  
Հանդա փոխս բէրեց Կարօն,  
Մկա լծինք Շապազն ու Խէրօն,  
Օր դմաննայ մզի ուսո Միրօն,  
Տղէք, ձէն հանէք գութնէն,  
Տաս տուն ա մեր բնատէն.  
Գութնի ակեր ճըւուըռան,  
Ճուըռայ, ձէնիդ խուրպան.

Հան, Խազօն, Զմօն էկան,  
Բերին մածնախառ թան,  
Իդ հաղսի կարձկինք գութան,  
Հա բաղեմն, հառաւել:  
Մատաղ ձզի գմըշտան,  
Կըսեմ հոտղներ էրթան,  
Պաղպաղ ջրով աղէկ հովցան,  
Լուան, զըւըռցուն՝ արծան:  
Տաւար էկաւ, քնուց յէլան.  
Գութան լծին, խառզան առան:

Մեր գութան ա. ծուռ ու մուռ,  
Յըս տարուան տարին շատ մումուռ,  
Ընենպար տանին խազու դուռ,  
Խարան կուզին, տուր, հա տժւր:  
Բրսօն յէլաւ, բռնեց մանճ.  
Յարտ կեղնի աղէկ կանանչ,  
Կուութն ուտայ ճանաչ.  
Աստուած օրթնէ գութնի մաճ:  
Փաղպա գնաց Բրսօ պապ,  
Գմշանուն բերեց զննլկապ,  
Օր ըսկի չմնան պարապ.

1) Ամեն տան զլուխ «հառաւելի» երկու տողը կրկնելու է.

Գուօմնի տուն եղնի խարապ,  
Քաղքցի Ապօ ձեռ կը փարչ,  
Երես փրչոտ կը մանէր արջ,  
Զարիիէն կուզայ խարան,  
Աղքոն թեզ էկաւ առաջ,  
Աղքո մազերն ա խառ,  
Էն դհէն էկաւ բարբառ,  
Դու կը մանէր նոյա դառդառ,  
Գնաց, չեկաւ, ըսեց առ, առ:  
Զիյալ, նէկօ վրէն կռնամս,  
Զէ յմնօր կէնինք գքու բանս,  
Հարսի զլսուն օսկի քաս,  
Գութան, ակօս կը բանմա:  
Մկա լուս ա ու աղօթրան,  
Գմշտանուն քսենք խարբան.  
Օր բռնարին, չի խամնան,

Աստուած օրթնէ գութնի բան:  
Յէս օր բերին տուն աղ,  
Ջմեռ օր էղաւ կը բռնայ պաղ,  
Մեր մանձլի զան էղնի սաղ,  
Աստուած օրթնէ մեր հոտաղ:  
կը համպրուի Մուսլո կողեր,  
Շատ ունինք վարի կոռթեր.  
Մ՛խ, էտ անտառուած գողեր,  
Չթորկին վարենք մեր հողեր:  
Մեծ պապէն դռնէն բռաց,  
—Տղա, հորու բերան բաց.  
Հասօն ու Խալօն ա էկած՝  
Աև ջուր դայ ուրանց աչաց,  
Դոր փախնինք, դոր հեռենանք,  
Մեր արտ ու ափ մօռնանք.  
Ցորեն կուզին, դէ, չտանք:

\*  
\* \*

### Արձեօի բարբառավ

Արև տռե վեր սարերաց,  
Ղուրպան եմ, Մարալ, էդ թուխ աչերաց,  
Շարից էկաւ շարմարական,  
Թալան թալից ծաղկան պիար.  
Կօ սկօ էկաւ ամլուսրի գնդերով,  
Թալան էթալ արտի պիար,  
Կը սըռսըռեր գնտերով եար:  
Թալան էթալ արտի բաղչէն,  
Կը սըռսըռէր եարոչ մախչէն:  
Թալիկ կուզայ, որ թաւալի,  
Ցորեն էլնի, ծաւալի:  
Շուռ կը տայ որ շոնէ շուռ,  
Կոռիկ, Կոան ընկէ ճռնէ ճռու:  
Թալան թալէ արտի պերիճէք,  
Շուռ կու տայ ... :

Գութան թալի արտի պիար,  
Կոր մուկ ընկէ մանձլին խակառ,  
Զորա գմէշ,  
Զեռներս թալեմ Աստծու փէս:  
Մարալ, Կորեկ ու Մարալ,

Դիւ շորորայ կեաքւու նման:  
 Թալան թալի արտի բանին,  
 Կո սկօ էկաւ բարի խնամին:  
 Դուման, Տուման,  
 Դիւ կը շորորաս կեաքւու նման.  
 Թալիկ կուզեայ թալոսլական,  
 Կուշներ շուռ կուտայ խաչմարական:  
 Արև առեց վեր պետենին,  
 Դուրպան ըլլեմ Զորա գմշուն  
 Թուկո գեարտենին.

\* \*

Դարսայ նախիջեւան զիւղի բարբառով \*)

Յորիկն էլաւ,  
 Արոը կերաւ.  
 Շոդ է շարուրէ,  
 Ակօսը հարուր է,  
 Թէլի գոմէշ,  
 Ասլան գոմէշ:  
 Գործը բարի է,  
 Տարոց տարի է,  
 Միջակը լազառ է:  
 Առջի հոտաղը զաղառ է:  
 Մաճը մաճին է,  
 Զեռն ակնջին է.  
 Վայ ուշտան հոտաղ,  
 . . . խան բազին է:  
 Հովդըր, սարին դըր,  
 Ալլան եեարիմ դըր:  
 Վարենք, արտ էնենք,  
 Դոււմնին դարտ էնենք.  
 Վարենք վարելով,  
 Ակօսը շարելով:  
 Ելնենք դուս առաւել,  
 Առաւելի գոմէշ

Ամակիդ դուրպան,  
 Խալան գոմէշ.  
 Արել գնաց,  
 Մարալը մընաց:  
 \* \*  
 Սև ամպը չադր է 1),  
 Դոււմնի դադր է.  
 Թէլի գոմէշ:  
 Շալակդ ժանը է,  
 Երիւդ մանը է.  
 Թէլի գոմէշ:  
 Ակը խորին է,  
 Դոււմնի փորին է.  
 Թէլի գոմէշ:  
 Շոդ է, մեղաք է,  
 Ակօսներդ հազար է:  
 Թէլի գոմէշ:  
 Վարենք, սև անենք.  
 Սկանք գոմէշ,  
 Զանս քե դուրպան է,  
 Մէյրան գոմէշ:  
 \* \*

\*) Ասել է Անտոն Խաչատրեան Դարս. նախիջեւան զիւղացի.

1) Ասել է Գէորգ Ներսէսեան Դարս. նախիջեւանցի.

Հարս եմ ու հարս 1),  
Կարմիր ու ճերմակ հարս.  
Առնեմ պաղեմ ակօսզ,  
Եդ է քազա ճաւասը:  
Մանի ըսեմ ու շարեմ,  
Լըցեմ տողբակն ու կարեմ.

Առնեմ, քաղքէ քաղաք ման կըդամ,  
Քեղէն լաւը կը ճարեմ:  
Գութան, գութան, ալ գութան,  
Խոփէ քարէ քար գութան,  
Եկան քովէդ անց կեցան,  
Հոտաղ մաճկալ լալ կեցան:

\* \* \*

### Վաղարշապահ բարձրաւով

Գուղանս հաց եմ տանում,  
Եար նայ նայ նայ, նայ նայ նայ 2).  
Բերանը բաց եմ տանում,  
Մեխակով, դարչինով իմ եարը:  
Մաճկալին շատ եմ ուզում,  
Զուկը տապկած եմ տանում,  
Մեխակով, դարչինով իմ եարը:  
Ամպել է ամպի տակին,  
Ծունկս ծնկանդ տակին,  
Ես քեզ որտե սիրեցի,  
Մեխակի ծառի տակին:  
Բոզ ձին հեծել եմ,  
Արազին մօտեցել եմ,  
Արազ, ճանբայ տուր անցնեմ,  
Իմ եարին կարօտցել եմ:  
Էս Արազի ատէքը,  
Կողբայ պիան կեատէքը,  
Նստել են դուբներին,  
Ասում են լաւ զայտէքը:  
Ինձ մի պուռուր տուն ունեմ,  
Մէջը ոսկէ սուն ունեմ,  
Գաջն ու գերան պար պիտէր,  
Սրտով սիրած եար պիտէր:  
Քարի տակը քոլոտ ա,  
Կարմիր ձիուն արօտ ա,  
Քօլովիկ օխտը տարի,  
Քիրն աղբօրը կարօտ ա:

1) Ասել է Լեւոն Ներսէսեան Ղարս. Նախիջ. զիւղացի.

2) Սոյն «նախայ»-ը իւրաքանչիւր տողին կրկնելու է.

Արազը հեշտացել ա,  
Ճանփէքը կօշտացել ա,  
Խաբար սարէք իմ նանին.  
Մուօթարին շատացել ա:  
Բաղումս կայ բաղվանչի,  
Շիւ կայ շւի նման չի,  
Քոլուք - քոլուք դուս թափան,  
Մինն իմ եարին նման չի:

\*  
\* \*

Վաճայ Գործոր զիւղի բարբառվ <sup>\*)</sup>

Գիշերուայ խաւ խուսացին՝  
Սարուացք դէնեն լէծեցին,  
Արտի հար արձեկեցին,  
Զենջիներ պատրաստեցին:  
Մանձկալ իր գլուխ պացեց,  
Խաչեալ Յիսուս աղաչեց,  
—Տէր իմ, օգնական, կանչեց,  
Գոմշուկներ բէրեց, լծեց:  
Բարով ասին, գործ դըին,  
Խօրօտ հօրօներ էրքին,  
Մանջկալ կանչեց ամօլին,  
Ամօլ կանչեց սժտունվարին,  
Գործ շիտակ դիր և բարին:  
Շօրօրայ, դէհ Մարալ, շօրօրայ,  
Գութան ակօսան կօրօրայ.  
Իուսմենի անիկն աւիրայ,  
Շէպէթ ակօսներ կը շինայ:  
Բացուիր ալօթրան — բարի լուս.  
Դէհ ձուռ ջէնիրան մաիր ակօս.  
Եկաւ մեր տան տէր Կիրակոս.  
Չանի կռվիռ, մեղի ափսոս:  
Զորս գոմէշ ակօսին,  
Արև առեր կօտոսին,  
Բարեւ տսա Ոժտան վարին,  
Բարով դարձիր վեր գործին:

<sup>\*)</sup> Գործոթ ղիւղի տէր Գաւթի Ասածը որ ինքը զրի առած է, կը Թողում, թէ եւ շատ սխալներ կան, բնագրին համեմատ.

Անուշ խով ի, Մարտալ գմէշ.  
 Ձեռ թալէրեմ Աստուծոյ փես,  
 Են մօռնամ, հալս կէլի դէշ,  
 Քաշի, քեզի կուրպան, գմէշ  
 Գութան ընկէ արտի քողեր,  
 Կը ճէռվեռա սիրուն ակներ,  
 Առավել ասա. դէհ Ուժտուն,  
 Սիրտ սադ արա խետ Աստըծուն:  
 Գութնի փէտեր ամէն թեղի,  
 Շուռ կուտայ, հողեր կը թէղի,  
 Տուօմենի գլուխ կը թաղի,  
 Դէհ Շէկո, Աստուած քե պախի:  
 Զէն տուր, ձօ, տնաւեր մանճկալ,  
 Խոկի չես անէ կալմակալ.  
 Ասա, հօրոր, կանչի պարով,  
 Քէրթիր, թափիր խալալ զուլալ:  
 Անուշ գուգա հարաւ քամին,  
 Մանջկալ կանչեց Ամորվարին:  
 Զէն տուր Ուժտան տնաւերին,  
 Թող կանչի հօրօրն ի ...  
 Դէհ արա, Շէկո, ասեմ բարով,  
 Դործ բոլորինք Աստուածն ապով,  
 Մանճկալ, դու կութան թև արա,  
 Որ ժողուենք մէջնակ Աստուծով:  
 Վառէրի շուքեր վառէրի,  
 Պարով գործեր պոլորեր ի,  
 Մանջկալ մանջին թոռեր ի,  
 Չիտէմ տնաւեր քէներ ի:  
 Բարով ասա, Ամօլ, շանւորդի,  
 Դու չես գիտէ արտն կորդի,  
 Խողն ակօսից կը խօրդի,  
 Մանճկալի աճքեր կը ճորթի:  
 Մի նեղացի սիրուն մանճկալ,  
 Շատ մի էներ կալմակալ,  
 Չորս լուծք ունենք, ուղը մալ,  
 Աշխատինք ուտենք խալալ զուկալ:  
 Կութան ինկէ արտի ափեր,  
 Քաշէք իմ սիրուն գոմշուկներ,  
 Վարենք, ցանենք սիրուն հատիկներ,  
 Աստուած տայ իր բարիքներ:

Անուշ քամին կը գէղգէղայ,  
 Շէկօն մէջ ակօսին կը լողայ.  
 Կութնի խօփ դետին կը սողայ:  
 Մանջկալ մանջին կը դողդէղայ:  
 Քաշի, Շէկօ, քեզի կուրպան,  
 Խաց բերողի պնուն Սուլթան,  
 Էկաւ ինկեաւ խէտ ակօսան,  
 Շատ աշխատողին էղնիմ կուրպան:  
 Կութան ինկէր արաի խոզան,  
 Առնեմ սիրողս, էլնեմ զօզան.  
 Քաշի Շիրին, օտացդ հայրան,  
 Տուօմենի տուն էլնի վերան:  
 Հէւար ի գոմէշ, հէւար ի,  
 Էկաւ, կօլամ քե վարի,  
 Մանջկալ քս տուն աւիրի,  
 Կայիմ պէռնի, կութան չաւիրի:  
 Արև մտաւ քո Ուժտուվար,  
 Կանչիր բարե, տօ Խորիկվար.  
 Հառավէլ ի սիրուն Շահպազ,  
 Մանջկալ ես չեմ քաշէ քու նազ:  
 Տէմ տու, անիրաւ Խորիկվար.  
 Կանչիր հառավէլ անդադար.  
 Հա հառավէլ, սիրուն եղնիկ,  
 Տան տիկինի անուն Եղունիկ:  
 Փոխան իլէ, կութան կանի.  
 Սուլթան իլե, կութան կանի,  
 Տուօմենի խոզին կը խանի,  
 Դեղն ու գեղդիր խետ կը տանի:  
 Մանձկալ տեսաւ խաց պիրողին,  
 Կանչեց իր խօրիկվարին,  
 Զեռքդ պոնեմ, տամ գրողին,  
 Կերթամ, խասնեմ իմ սիրողին,  
 Հա հառաւէլ ասեմ մեր կութան,  
 Տօ, տնաւէր մանջկալ Փոխան,  
 Ամեն օր ուտածդ թթու թան,  
 Գլուխդ դնես վեր կութան:  
 Հեվար ի, գոմէշ, արև մտաւ.  
 Հա, հառաւէլ ի, քաշի, բոմակ էկաւ,  
 Էլի, կուրպան, Շէկօն, Շիրին էկան,  
 Մալու—մալու հօրօր կանեմ,

Յիրիկուն ի միջնակ կը խանեմ,  
 Խէտ իմ Կոռուանի էրքեր կասեմ։  
 Իմ եար իէ՛ կայնէ տանիս,  
 Մէջքը բարակ ատի կամիօ.  
 Ծացդ եր յէզի, ծծերդ եմիօ,  
 Ասի. — կը թողեմ, չելա գեմիօ,  
 Յեղիմ եմ ես, տէլը բազա  
 Սիրող անեմ, ծծերդ մազա  
 Ընքերդ թուխ, աշերդ խաժ ա,  
 Կը գովամ իմ նէկոն, կաժաւ.  
 Եար մը ունիմ անուն Շուշան.  
 Իմ մատիս մատնիք քե նշան.  
 Առնեմ մտնեմ մէջ ակօսան,  
 Մանջկալ քեզի կլնեմ նայրան։  
 Ա՛խ երկինք, ամպեր կը գոգոան,  
 Քո ուաքերաց կուրպան Կռուան.  
 Եիրին, գու լողա մէջ ակօսան,  
 Բարև տանք էս քոփակ Ոժտան։  
 Բարև էկաւ, գոմէշ, խամբարձում,  
 Դաշտերն ի խերի, սարերն ի ձուն.  
 Աստուած քակի կոմսի մարդու տուն.  
 Մարալ, ես կուրպան քո հոգուն։  
 Երկինք կը խաղայ թուի ամպեր,  
 Ամպեր կը թափին վարդի ջըեր,  
 Զէ կուրպան, սիրուն կռուաններ,  
 Ես ձեզի կառնեմ, կէլեմ սարեր։  
 Զեզի կուրպան, Նէկօ, Շիրին, Զէյրան.  
 Վարէնք, քակենք չայիր չիման.  
 Տանտէր մէռնի քզի, Կռուան.  
 Մէկ օր չիկայ մօտ՝ իր կութան.  
 Որ գութէնվարներ իմանան։  
 Կռուան, դէ կուրբան, վարենք մենք.  
 Շուշուտ մեր գործեր պոլորենք,  
 Տէր Աստուած, միջնակներ ժողուենք,  
 Բարօվ արտ մէլ նորէն խերկենք։  
 Կեախ, կռուան, կեախ ի,  
 Մարալ, կուրպան, վերապախի,  
 Խորիկվար, Աստուած քե պախի,  
 Եչքս կուլայ, սիրտս ուրախ ի։  
 Տօ, համոլվար, շատ մի ուռէ.

Ամեն մարդու ... մեր ձեռն է,  
 Կասես Ոժառւն, կասես Ոժառւն,  
 Բէրան կը թալես ամէն մարդուն:  
 Մանջկալ ասաց.—Համոյ, Ոժառւն,  
 Սիրտ սաղ արէք խետ Աստղծուն,  
 Քէլէք իմ գոմէչներ սիրտւն.  
 Մատաղ կլնեմ ես ձեր հոգուն:  
 Յէւար ի, արևմտոց, սիրուն նազի,  
 Ոժառվարի սիրտ եարալու  
 էն համոլվարն էլի շատ դարելու:  
 Մանջկալ կանչեց, սժառուն—Պետրոս,  
 Քոռնա քու երկու աշից լուս,  
 Մէկ շիտակ իրիշկայ ակոս,  
 Որքան խորան տրի և փոս:  
 Ոժառն կանչեց—Մանջկալ աղա',  
 Զէվիչք ակոսան կը պապդա,  
 Կռուան մէջ ակոսան կը խաղա:  
 Մանջկալ ասաց—Ամոլ տարտի տէր.  
 Աստուած առնէ քիւ խէր ու մէր,  
 Որ մանջկալ եղնէր քեզի խէր,  
 Սիրող քեզի կը խասուցեր:  
 Չորա, կուրբան, հառաւել տուր,  
 Սիրող իլերի կայնէ ի դուռ,  
 Մէջք բարակ խանչիլի բուռ,  
 Գոտին զարկէ Շէրվանի նուռ:  
 Ես Տէր Դաւիթն կաղտական,  
 Փախամ, էկամ, խասան, Իրան,  
 Մէջ իմ հալին շիւարամ:  
 Ես Տէր Դաւիթն եմ Գործոթեցի,  
 Շատ ինչերաց ես զուրկ մացի,  
 Տիրուխնիս Կուրիսեցի  
 Գործոթ ըսուած բանձր տեղ ա,  
 Չորս բոլոր ծառ և ճիւղ ա,  
 Երբ միտքս գինի սիրտս կը մըռմռա:  
 Կութնի բառեր կասես գրի.  
 Տէր Դաւիթ կութան տեսեր ի.  
 Ոչ գոմէշ տեսած եմ, ոչ լուծ,  
 Խէր չտեսնի Համիտ իրա հոգուց,  
 Ե՞րբ լծեր եմ Զէյրան, վարած եմ խոզան.  
 Երբ աչսեր եմ Շըին, Կռուան,

Դրեմ եմ զլուխս վէր գոէթան։  
 Երբ վար էրած էմ Գործոթա փռս,  
 Քոռնայ Շապոյի էրկու աչից լոս,  
 Խոկի հայուն չասաց ափսոս։  
 Որ մենք տէսնէնք կութանի ակոս  
 Երբ մենք կութան կանենք։  
 Դաշտ, սարեր կը խէրկենք.  
 Բարի—բարի սերմեր կը ցանէնք  
 Հոգով մարմնով կը փառաւորուէնք։  
 Գործոթ ըսուած տեղը յարմար,  
 Յառջնի դուզ, յէտե օար.  
 Աստուած կտրի Համիտի ճար,  
 Զի խէր մեր մալ, մնէնք անձար։  
 Լծէրինք կութան, վար կանենք.  
 Մէկիկ Աստուած կապահինենք։  
 Մէկէլ չասես գրի կութան  
 Հիմա էղած եմ կաղթական  
 Կութան էրածեն ցիր ու ցան,  
 Աստուած անի վաս ազգի դիւան։  
 Խննսունվեց թիւ յունիս վեցին  
 . . . Հայերաց մթնցուցին,  
 Տղան իր մօրեց զատեցին։

## 2.

## ՀՈՒՆՁՔԻ ԵՐԳԵՐ.


**Ալաօկերտի բարբառով**

Աստեր իք սէլի վրէն 1),  
 Կը մանիք կոտ կիրիրէն.  
 Արի, տես լուսուն ձեր ջանին,  
 Գէրնդուրներ ինչ պաի հանին.  
 Զգի քշինք, դուս հանինք յարաէն,  
 Օր սկի չզբուցիք մեր դարեէն։

1) Քաղնուրներ, խուրծ կապողներ եւ սայլապաններ փոխ առ փոխ կերպեն։

Չուրի յիրկուն դու կը մոթմոթաք,  
 Խնչ օր զրեց յէլուկ ձկան կը թփոտաք,  
 Կէմով կը կապինք ձզի սէլի յակ.  
 Օր մեր դարխօյի 1) պէս ուտիք, հաստընաք:  
 —Հայ, հայ, գերնդուռ աղբէր,  
 Զէ ձեր հալ շիտակ կէրևէր,  
 Չուրի օր արև խօրունդ պատէր  
 Վաղն օր մացինք սադ,  
 Ելման գիգանք քաղ,  
 Իմ խուրձն ա շատ աւարայ,  
 Ճաւքի բանօքին տաստարուայ.  
 Քու յնկեր տեսեր ա, իմալ կէնայ,  
 Դառնայ յետնդի ի բարդերով լնայ:  
 —Դու լէ տեսեր իս իմ գերնդին,  
 Կեռուկա, ինչ օր կիւըւու կտցին.  
 Օր թալիմ, ինչ օր մազի կը տանա.  
 Քզի կը լացու, հոգիդ կը հանա:  
 —Էտոնք օր կը զբուցիս, ըսկի բան մի չին.  
 Գէրնդուըներուդ համար սրտի հովանքին.  
 Դու արի, հարցու մեր կեռ բանօքուց.  
 Տէս, իմալ կը ժողուայ, կէնայ բէդ բէդ խուրծ:  
 —Փիցուկ խրձնաւը, մկայ ինչ կսիս,  
 Զէ քիչա մացէ, օր հոգիդ հանիս.  
 Արեւու յառէջ շոգուց կը հլքաս,  
 Դը հէրիք ա բերանդ լէն ու լէն բանաս:  
 Իմ բանօքին քեանի կէրթայ կը փիլայ,  
 Զեր պէս գէրնդուըներ յարտերուց կը հանա.  
 Զեր գէրնդիք տեսանք, օր խամ էրկաթ ին,  
 Դու շառէ քարին, շուտ մի կը կստրին:  
 —Ինչքան բանձրնաս, ինչքան վեր յէնիս.  
 Ըսկի չեղնի օր, իմ բարա էղնիս.  
 Ես յառջնէն քաղիմ, ծորիմ, ծորթփիմ.  
 Դու միճակ յէտեանց կը վազնիս հեւալին:  
 Դու նստեր էք բարդերու հովեր,  
 Մզի օր կը տեսնիք, կը դողայ ձեր չռքեր,  
 Գէրընտիք դրէք ու զացէք տներ:  
 —Իմալ էնինք իտա խրձնաւըներու ձեռ,  
 Ելման գուզին օր շալաք ուրանց դնինք բեռ.

Զեր տղէկներուն խանչէք, օր կը մանին նեռ,  
Դուք չը կընաք տանիք մեր ծանտր բեռ։  
Հերիք ա, էլ կեառցանք ձեր տըռու նազից.  
Շիտակ ամբ էկաւ մզի վերեռուց.  
Էլ կանել չեղի ձզի իտա տեղ,  
Վրուազով յէլէք, փախէք յէնի գեղ։  
—Երկուսդ լէ էղերիք, ինչ օր տօխսանոց 1),  
Չ'ջօկիք յիրարուց տասնոցն ու քսանոց 2).  
Լսեր իք մեր գերընդու զնդուն ու դնդոց,  
Գընկնի մըջ յարտին իմալ կրակ ու բոց։  
Գէրընդիք թըլս քիսնին քարին չըխըբնկան,  
Էդ սուտ մնանով խըլդ ինչ հասկնան.  
Կընաք դու մեր պէս խօլ ու խուվաթով,  
Բէդ խըլեր կապել հազար դուտարով։  
Շատ զրուցեցիք, էլ աղբէր, հէրք ա,  
Աստուած էրկսիդ բանիկ լէ յաջողա.  
Կանչինք եօթն—անուն. էղնինք մեր բանին,  
Դուռ ու դրկեցին, չընկնինք նեղ օրին։  
—Ա՛ն, գերընդուսը, գէրընդուսը,  
Մուկն ու կատուն պոչաւոր,  
Թզրբան ձզի յէտիք ա,  
Խլան 3) ձզի կտրել ա.  
Մկայ գիգայ հացի զօր,  
Հըտ ճաշ փլաւին սխտոր  
Ինչ օր տաժու հէռէւանց.  
Կանիք իշկիք դէմի հաց,  
Ուրիշ ումնաւ չը մնաց.  
Վէրև անձրն՝ ներքեւ թաց.  
Կանչէք դուս գայ արևուն,  
Բալիքմ չորցու յարտերուն։  
—Շատ բլղբել (շատախոսել), աղէկ չէ,  
Յըսօր հանաէի վախտ չէ.  
Մկայ յարտեր կը չորնան.  
Նոր գիգանք դէմ ու դիման։  
Շէնք ու շնորք քաղի մէջ.  
Զուր չարչարանք խըլան մէջ,



1) Ինեսուն տարեկան. 2) Տաճկական փողեր. 3) Փրկութիւն

## Յ.

## ՍԱՅԼԻ ԵՐԳ.

Գործօր զիւղի բարբառով \*).

Մարտօն կանչեց—Մարկոս, որդի,  
Կանչիր թող, գայ խուս շանորդի.  
Թող գայ մեր սէլիր շինի:  
Գնաց Մարկոս, խուսն կանչեց,  
Խուս իր քախում—մտխում առեց,  
Էլաւ էկաւ, Մարտոյի սէլ շինեց:  
Խուս ուրագ ուր ձեռ առեց,  
Վէր Աստուած աղաւինեց,  
Մինչ իրիկուն սէլ շինեց:  
Մարտօն վէր սէլին ուրախացաւ,  
Երբ սէլը ուր դուան շինած տեսաւ,  
Ուրախութենից չքնկցաւ:  
Խուս ասեց սէլի տիրոջ—Աղա,  
Արհ, սէլի կշտին կայնի, խաղա,  
Զասես՝ խսան հալսի գախ աւ:  
Կանչեց.—Խուտաղ, գոմէշ խան դուս,  
Քունա քու այից էրկու լուս,  
Զես լսէ, ինչ կասի իմ խուս (հիւսն),  
Էրթանք, դաշտէն ցորէն պիրենք,  
Լծենք եղներ, ցորեն ցանենք.  
Խսան ձէն մեր ակնձէն կտրենք,  
Լծին սէլ, Զէյրան ու Շէկօն.  
Խուտաղի անուն էր Մէկօն.  
Տունդ աւիրի, տանտէր Հակօն:  
Սէլ կայնաւ դէմ բարդոցին,  
Վէրին Աստուած աղաչեցին,  
Նոր էրենց սէլ բարձւեցին:  
Շիրին, Զէյրան բերին լէծին.  
Սէլ պիրին վէր աղուրին,  
Մէկօն էրքեց սէլի էրքեր.

\* ) Ասել է Գործոթ զիւղացի Տէր Դաւիթ.

Զէն ընկաւ դաշտ ու ձորեր,  
 Կը խաղին աղուրին գոմշուկներ։  
 Բարեւ անեմ իմ Հակոբ աղին,  
 Սէլն ընկեր խետ աղուրին.  
 Քէշեց գնոց մէնջ կալին.  
 Երբ սէլ մէնջ կալին տեսան,  
 Տնով—տեղով ուրախացան.  
 Տօ, Շէկօ, Ձէյրան, ձեզի կուրպան.  
 Զեր խող վեր իմ գոււմնի տամ.  
 Երոջ ազեր կը ճէռվեռայ.  
 Սէլի ակներ կը փէռփէռա.  
 Գոմսի մարդու տուն աւիրայ։  
 Հէ, էլ Կոռուան, քեզ հայրան,  
 Սիրողս կայների, կանի ման,  
 Սիրողս սիրեր էի, կասեմ զան։  
 Դու կայներ էս, կամաց կամաց,  
 Աչքով ինծի կանես իմաց.  
 Միուս խալաւ, ուսկոռս մնաց։  
 Իմ եար կայներ ի, մաղ կանի,  
 Մէկ մատ կանի, մէկ նախ կանի,  
 Իմ մրազ խետ քեղիկ Աստուած անի։  
 Սէլ բարձեր իս, կուգաս դաշաէն,  
 Շիւրեր էմ քու դարտէն,  
 Պատուեր իմ էրեսի պառտէն։  
 Կը ճէռճէռա սէլի ակներ,  
 Կը փէռփէջայ արտի բարդոցներ,  
 Կուրպան եմ ձզի գոմշուկներ։

---